

կաթողիկոսութիւնները միացուելով՝ 28 թէմուզ 34 ի տրուած հրամանով Սահակ կթղ. Ստոյ կ'անուանուի Կարողիկոս — Պատրիարք Թուրքիոյ Հայոց 1916 Յուլիս 20 ին. նոյն թուականին կը գումարուի Ս. Աթոռի Միաբ. Ընդհ. Ժողովը՝ որ կ'ստիպուի ընդունիլ պետական այս կարգադրութիւնը: Սահակ կթղ. նոյն եօթնեկին շաբաթ երեկոյին կը բազմի առաքել. Աթոռը Տեառն եղբոր, կ'ստանձնէ Ս. Յակոբի վանքին բոլոր գործերու վարչութիւնը: Նոր կանոնադրին համաձայն կը կազմէ Սինոդ մը, Ս. Յակոբ գանուող հետեւեալ եկեղեցականներէն, որ են Ստեփանոս Արեպո. Յովակիմեան (Ա.Ս. Նիկոմիդիոյ), Կարապետ եպո. Մազրևեան (Ա.Ս. Պանտրմա-Պալլքէսէրի), Պետրոս եպո. Սարաճեան (Ա.Ս. Հաճընի), Գիւտ եպո. Մխիթարեան (Քարտուղար կթղ-ին), Գարեգին վրդ. Մաչատուրեան (Ա.Ս. Գոնիայի), Մովսէս վրդ. Ոսկերիջեան (Ա.Ս. Անտիոքի), Եղիշե եպո. Զիլիկիւրեան (Ատենապետ Միաբ. Ընդհ. Ժողովի), Դաւիթ վրդ. Տրտրեան (Լսպ. Ս. Յակոբի), Գրիգորիս վրդ. Պոյաճեան (Միաբան Ս. Յակոբի):

Երբ անգղ. բանակը յաղթական գնացքով կը մօտենայ Երուսաղէմի, կառավարական որոշմամբ՝ Սահակ կթղ. ինչպէս նաև Սինոզի անդամները և Օրմանեան Սրբազան, լատին, յոյն պատրիարքներուն և ղպտոց եպոստոսին հետ, ինչպէս նաև ուրիշ մի քանի օտար եկեղեցականներ 1917 ին, Երուսաղէմէն կը տարագրուին և կը տարուին Դամասկոս, և հոն կը մնան մինչև զինադադար: Երուսաղէմի անգղ. գրաւումէն յետոյ կը դադրի Սահակ կթղ. պարքին պաշտօնը Երուսաղէմի Ս. Յակոբ վանքին մէջ: Զինադադարէ վերջ, Սահակ կթղ. տիրող քաղաքական խառնաշփոթ կացութեան հետեւանքով չի կրնար երթալ Սիս՝ իր Աթոռը, զէպքերը հետզհետէ կնճուտ հանգամանք մը կ'առնեն, ու դարձեալ Ազգին, մասնաւորապէս Կիլիկիոյ Հայոց վիճակը տագնապի կը մատնուի: Այս պատճառաւ Սահակ կթղ. 1920 Մարտին մտադրեց զէպի Եւրոպա ուղևորութիւն մը կատարել Կիլիկիան Ֆրանս. կառավարութեան գիտակցութեամբը, նպատակ ունենալով իր ժողովուրդին կեանքը ապահովել. կթղ.՝ որուն իբր թարգման կ'ընկերանայ Վ. Լ. Խուպէսէրեան՝ 31 Մարտ 1920ին Փարիզ կը հասնի և անձամբ ներկայանալով յիշատակագիր մը կուտայ նախարարապետ և արտա-